

էր Ռէթէոսի եղբոր՝ Յովհաննէսի հետ: Իշխան Սալուման Արղուն-
թեանը Յովսէփ արքեպիսկոպոսի յանկարծահաւ մահից յետոյ
յայտնի է որ Դաւթի կուսակիցներէց էր, որոնք և Թիֆլիսում
աշխատում էին Դաւթի համար: Նամակից երևումէ որ Թիֆ-
լիզցիք խոստացել են (երևի դադարացրել էին) Էջմիածնի
Տաճարում վառելիք մօմը տալ, ինչպէս և մինչև օրս էլ տա-
լիս են, և Դաւթի անունը երեք եկեղեցում յիշել են: Գրումէ
մեռոնի պատրաստութիւն տեսնել, որ Դանիէլը կաթողիկո-
սանալով Նքեք—խորանում մեռն օրհնէ, ինչպէս և եղաւ:
Դիւմիւշխանցի Մանուէլ Ալթունեան կամ Շահինեան, Ներսի-
սիսի ընկեր և ջերմ Դանիէլեան, այն ժամանակ գտնւում էր
Պոլսում: Իսկ ինչ վերաբերումէ այն բանին թէ Էջմիածնից
կամենում են Կայսեր և Ռուսաց Սինօդը խնդրագիր ուղարկել,
այդ էլ կատարուեցաւ 1802 ին: Ուղարկուեցաւ 3 օրինակ.
մինը Կայսեր, միւրը Սինօդին և երրորդը Աբրոսի մետրապո-
լիին: Կառալիցին է այն ժամանակուայ Վրաստանի Ռուս կառա-
վարիչ Կովալենսկին, որ Դաւթի կուսակից էր ինչպէս և Ռու-
սաց դեսպանը Պոլսում՝ Թամարան. մինչդեռ եփրեմ Արքե-
պիսկոպոսը և Լազարեանները ջերմ Դանիէլեաններ էին: Կո-
րնէ է այն ժամանակ Կովկասում եղած ռուս զօրաց ընդհանուր
հրամանատար Կնորրինգը:

ՄԻԱԲԱՆ

Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

« ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱԽՏԻ »

(ԸՊԻ ՏԷՆԷ)

Միթարեանց բազմապատակ հայրերը Հայոց ազգի լուսաւորութեան մե-
ծապէս սատարել են նաև այնու, որ օտարազգի ընտիր դասական մատենա-
գրութեանց թարգմանութիւններին վաղուց ձեռնարկելով՝ շարունակ և ան-
խոտոր այդ ճանապարհով են ընթացել: Նոքա մինչ ցայսօր չեն դադարում
արդարացնել Գեօթէի այն ասութիւնը, թէ թարգմանիչը միջնորդ է հա-

մաշխարհային հոգևոր հաղորդակցութեան, և թէ թարգմանական գործունեութեամբ ստեղծուած է այն յիշեր-հան մատենագրութիւնը, որոյ մէջ ազգաց մարգարէները իրանց լուսմաներն են վճարում: Գեթ թէն ղուրանի մէջ կարդացել է, թէ Աստուած իւրաքանչիւր ազգին իւր լեզուով մարգարէ է շնորհում, ինքն էլ յարակցում է, թէ թարգմանիչն է այդպիսի մի մարգարէ իւր ազգի համար:

Կար ժամանակ, որ Հայոց ազգը երախտեօք գնահատում էր Մխիթարեանց հարց այս օգտաւէտ ձեռնարկութիւնն և ագահաբար կարդում էր հայերէն թարգմանած Հովմերի, Վիրգիլի և ուրիշ անմահ հանճարնելի երկասիրութիւնները: Այժմ այսպիսի ուսումնասիրութիւնը ուսաստանցի Հայերիս մէջ թուլանում է, և թէ չասենք դադարում է. բայց արդեօք՝ ի նպաստ մեր յառաջագիմութեան, Ի բոլոր սրտէ ցաւելով, որ այնպիսի պատրաստ գանձերն անօգուտ են մնում մեր մտքի և սրտի ճոխութեան համար, մենք կրցանկայինք առ այժմ նոցանից մէկը փոշիների տակից դուրս հանել, յիշեցնել նորա գոյութիւնը, և եթէ հնար է՝ կրկին արծարծել նորա ընթերցասիրութիւնը:

Յայտնի է, որ Մխիթարեանք երկու անգամ են թարգմանել մեզ այժմ զբաղեցնող քերթուածը. առաջին անգամ հ. Ագեբեանը «Դրախտ կորուրուեալ», վերտառութեամբ, երկրորդ անգամ հ. Բագրատունին «Նորուստ դրախտի», վերնագրով: Վերջինն իւր ազատ, համարձակ, լիակատար, ճաշակաւոր և ճշգրիտ թարգմանութեամբ՝ աւելի յարգ է ստացել մեր բանասէրների մէջ, ուստի մենք էլ կօգտուենք նորա աշխատութիւնից, երբ որ կը հարկաւորուի Միլտոնի քերթուածից քաղուածքներ անելու:—Արդ մեզն ունինք երկու թարգմանութիւն, բայց չենք կարդում. արդեօք դժբա պատճառն այն է, որ քերթուածը կարդալու բան չէ, թէ մեր ճաշակը չէ զարգացել այդպիսի երկասիրութեանց ընթերցասիրութեան համար: Եթէ կայ մէկն՝ որ անժխտելի հեղինակութիւն կարող է ունենալ անգղիական գրականութեան հմուտ իմաստասիրութեամբը, այն անշուշտ Փրանսիացի բանասէր Տէնն է, որ ամենամեծ համարում ունի նոյն իսկ Անգղիայում. ուստի մենք ևս նորա դատաստանին կը դիմենք և ստորև քաղուածօրէն առաջ կը բերենք նորա իմաստասիրութիւնները մեր խնդրի նկատմամբ:

Անգուսպ Վերածնութեան (գիտութեանց և արհեստից) և նեղ կանոնների մէջ սեղմուած արուեստակեալ ստեղծաբանութեան ժամանակների սահմանագծում՝ հանդէս է գալիս մի զօրեղ և խրոխտամիտ հանճար որ տրամաբանութեամբ և զմայլած մտքով լաւ նախապատրաստուած է գիւցտզներգութեան և պերճաբանութեան համար, որ և յաջողապէս փառաւորում է իրանից առաջ սկսած բարձր վսեմական գործը՝ Ալլէքսնոն Սիդնէյի և Լոկկի գործը՝ Հեքսպիլիի ոգևորութեամբ: Մեծամեծ բանաստեղծների այդ հարազատ ժառանգը, խստակրօնութեան դարու ջատագովը և կարապետը՝ կացաւ սքանչական յափշտակութիւններով շուտ բորբոքուող և գործնական ընթա-

ցիւք ապրող սերունդների միջասոհմանում, և ըստ ամենայնի նմանում՝ է իւր Ազաթին, որ անհամբոյր երկրի վերայ ոտք դնելով՝ դեռ դարձեալ քամակից լսում է այն երկնային հրաշալի մեղեդիներն, որոնք իւր ականջին հասնում են իր համար ընդ միշտ փակուած Եդեմի դռների ետևից և հետզհետէ մարում են հեռաւորութեան մէջ թոյլ արձագանքներ տալով:

Ձօն Միլտոնը չէ նմանում այն տենդային, տագնապող, ինքեանք իրանց դէմ անդօր հոգիներին, որոնց ոգևորութիւնը պայթումներով է բորբոքւում, որոնք իրանց հիւանդական դիւրազագացութեան պատճառով՝ մերթ Ժայրայեղ վիշտ և մերթ Ժայրայեղ խնդութիւն են արտայայտում, իսկ իւրեանց դիւրաթեք մտաւոր բնութեամբ՝ կարող են քաջ ըմբռնել և վերա-տառելի տիպերի բազմատեսակ տարբերութիւնները, կամ նաև իրանց յախուռն բորբոքմունքների զօրութեամբ՝ ընդունակ են նկարագրել եւ ջնորք եւ կրքերի ընդդիմակութիւն: Միլտոնի հիմնական կարողութիւններն են՝ ընդարձակ գիտութիւն, սեղմ տրամաբանութիւն և պարթևական կիրք: Նա ունի պայծառ միտք և սահմանափակ երևակայութիւն, նա ըմբռնում է գերազոյն դաղափարական գեղեցկութիւններից ամենահայակապը՝ բայց միայն—մինը, նա ստեղծուած է ոչ թէ բանագործութեան (դրամշխի) համար այլ օրհներգութեան համար, նա չի ստեղծում գործող անձինքներ, այլ կազմում է դատողութիւններ և կրում է մեծայոյզ զգացումներ: Այս զգացումները ու դատողութիւնները, առ հասարակ նորա հոգու բոլոր զօրութիւններն ու գործողութիւնները, ամփոփւում են և խմբւում են մի կենդրոնական զգացման՝ այն է վսեմական զգացման շուրջ, ուստի և նորա հանձարից ամենայն զօրութեամբ բղխում է քնարերգական բանաստեղծութեան լայնածաւալ հեղհեղը, բայց այնպէս հարթահաւասար՝ ինչպէս ոսկէ դիպակի պերճ ճաճանչութիւնն է:

Այս իշխող տրամադրութիւնը նորա բնաւորութեան վերայ դիւր զհեռութեան և հաստատութեան դրոշմ, նա իւր ներսը ապաստան էր գտնում արտաքին մոլութեանց դէմ և իւր հոգու մէջ կանգնեցուցած գաղափարեալ ամրոցը անառիկ և անպարտելի էր դարձուցել ամենայն յարձակումների համար: Այս ամրոցը այնքան լաւագոյն էր, որ նա երբեք չի ցանկացել միջից ելանել և այնքան ամրաշէն էր, որ հնար չըկար նորան քանդելու: Նա հաւատում և դաւանում էր վսեմական իւր հոգու բոլոր ջերմեռանդութեամբ, իւր տրամաբանութեան ամենայն հեղինակութեամբ և ինչ աղւումն որ շարժւում էին նորա սրտի մէջ ինքնաբերաբար և բնազդմամբ՝ նոցա համար միշտ պատրաստ ունէր նորա զարգացած խելքը անհերքելի և հաստատուն ապացոյցներ: Այդքան վստահելի զէնքերով հարկաւ կարող է մարդը կեանքի մէջ մտնել անկասկած և համարձակապէս: Ով որ անդադար ապացոյցներ է բանեցնում՝ նա ընդունակ է հաւատալ, կամենալ և անխոտոր կերպով յամառել իւր բաղձանքների և հաւատոյ մէջ, նա յեղյեղով կիրպով չի աստանդում ամենայն պատահմունքի, ամենայն կրքի փոփոխ

քմահաճութեամբ, որպէս այն երեքուն դիւրածեք էակն, որ բանաստեղծ է կոչուում. նա ընաւ չի շեղուում արիւն և մարմին դարձած իւր հաստատուն սկզբունքներէից, նա կարող է մի որ և է գործի կուսակից դառնալ, բայց այնպէս, որ չի երկնչի հաւատարիմ մնալ նորան մինչև վերջը: Անյողդողդ համոզումն և պայծառ մտածողութիւնը կը դիմանան ամենայն հրապոյններին, ընդդիմակ զգացումներին, անակնկալ դէպքերին, բախտի բերմունքներին: Առաջին օրուանից սկսած մինչև գործքի ելքը՝ Միլտոնը միշտ և անընդհատ արթնութեամբ հսկում է իւր լուսաւոր գաղափարների ամբողջ գրութեանն, ուր նորա մտքի տրամաբանական ոյժը նեցուկ է դառնում նորա առաքելի սրտի ոյժերին: Իսկ երբ այսպիսի լուրջ տրամաբանութիւնը նուիրուում է՝ մեր այժման դէպքի պէս՝ ազնիւ գաղափարների սպասաւորութեանը, այն ժամանակ յարատեւութեան հետ միանում է մշտական զմայլութիւնը վսեմականի համար: Մարդ իւր համոզումները համարում է ոչ միայն ճշմարիտ՝ այլ և սուրբ: Նա մաքառում է յօգուտ նոցա ոչ միայն իրրեւ զինուոր՝ այլ և իրրեւ քահանայ: Նա միանգամայն ջերմեռանդ՝ անձնուէր՝ բարեպաշտ՝ գիւցազնասիրտ է: Բարեմասնութեանց այսպիսի սքանչելի միատրուութիւնը սակաւ մարդկանց մէջ է պատահել. իսկ Միլտոնի մէջ՝ լատարեւութեան է հասել:

Նա ծագում էր այնպիսի գերդաստանից, ուր որ կարծես թէ խորհրդով բոլորուել էին նորա որորոցի շուրջ՝ արիութիւնը, աշնուամտութիւնը, գեղարուեստական սէրն, որպէս զի մանկան ականջն և սիրտը օրօրեն վեհամաստ և պերճապայծառ թոթովներով, նորա մայրը օրինակելի անձնաւորութիւն էր և թաղի մէջ հռչակուած էր իւր բարեգործութիւններով: Նորա հայրը՝ վաղեմի ուսանողը Քրիստ—Չօրչի, ժառանգութիւնից զրկուածը բողոքականութիւն դաւանելու պատճառով, երեսի քրտինքով հարստութիւն ձեռք բերողը, թէպէտ փաստաբանի ծանր զբաղմունքներ ունէր, այնուայնայնիւ գրականութեան նախկին սէրը չը թողուց, որպէս զի իւր ազատական և խելացի հակումներից գլխովին չը լքանի, հետեւապէս աշխարհքի ստրուկ չդառնայ: Միւսնայն ժամանակ նա գրում էր ոտանաւորներ, քաջ կրաժիշտ էր, ժամանակի ընտիր երգահաններից մէկն էր: Նա Վօրնէյիուս Խանսէնի ճարտար ձեռքով նկարել աուեց իւր որդու կենդանագիրը, երբ որ սա հաղիւ տասը տարեկան էր և մանկան աւանդում էր բազմակողմանի և հիմնաւոր գրականական կրթութիւն: Թող ընթերցողը երեւակայէ այս մանկան, ինչպէս որ նա կենում էր առեւտրականների փողոցում՝ միջակ որեարի բարեկիրթ գերդաստանի մէջ, ուր որ ձգտումները վսեմ էին, կենցաղավարութիւնը կանոնաւոր, ուր սովորութիւն էր սաղմոսները երաժշտութեան վերածել, ուր քաղցրալուր մանրեղ էին գրում ի պատիւ Որիանայ Թագուհու (Նիլսաբէթ Թագ.), ուր որ երգեցողութիւնը՝ գրականութիւնը՝ նկարչութիւնը՝ կամ գեղասէր վերածնութեան բոլոր մտաւոր փառաւորութիւնը իջել էր, որ զարդարէ նորակրօնութեան քրիստոնէական զգացումը, ազնիւ աշխատասիրութիւնը, լուրջ պարզութիւնը, Միլտոնի

համայն հանճարն այս միջնորդութիւնէ Ժառանգում. նա մուծեց վերածնութեան շուքը՝ նորակրօնութեան լրջիմաստութեան մէջ, նախորդ բանաստեղծի (Սպէնսերի) հոյակապութիւնը՝ կալուինական խիստ վարդապետութեան մէջ, և ապրեցաւ իրար շօշափող երկու քաղաքակրթութեանց ժամանակ՝ կարողանալով երկուսը հաշտեցնել իրար հետ: Մինչև 10 տարեկան հասակը նա ունէր տանը մի դաստիարակ, բաղմունսումն ևս պուրիտանական անձ, որ նորա մազերը կարճ խուզեց. այլ և յաճախում էր ս. Պաւլոսի դպրոցը, յետոյ մտաւ հէմքրիջեան համալսարան, որպէս զի սովորի «քաղաքավայելուչ գրականութիւն», և չնայելով իւր աչքերի թուլութեան և գլխացաւի՝ տառերկու տարեկան հասակից սկսած այնտեղ անընդհատ աշխատում էր մինչև կէսգիշերները կամ աւելի ևս երկար: Ներք որ իս մանուկ էի, ասում «է նորա նկարագրած անձերից մէկը՝ որ շատ նման է իրան, ինձ չէր գրաւում ոչ մի խաղ: Իմ լրջմտութեան բոլոր զօրութիւնները ուղղուած էին ուսման և գիտութեան, որպէս զի նոցա սպառազինութեամբ ընդհանուրին օգտակէտ դառնալու պատրաստուիմ. ինձ թւում էր, թէ ես «ստեղծուած էի ճշմարտութիւն և արդարութիւն քարոզելու համար»: Եւ իրաւ, դպրոցում, հէմքրիջում, հօր մօտ, նա ամբարում էր գիտութեանց պաշար և ամենայն ուշիմութեամբ սովորում էր, զերծ նախախնայքներից և բոլոր լաւ մարդկանց գովեստներին արժանանալով, նորա միտքը դեգերում էր յունական և լատինական գրականութեան արձակ դաշտի վերայ, ոչ միայն մեծ մատենագիրները ուսումնասիրելով, այլ և նոյն իսկ միջին դարու բոլոր մատենագիրները. միւսնոյն ժամանակ նա ուսանում էր հետեւեալ լեզուները՝ հին Եբրայերէն, Ասորերէն, Բաբելական Եբրայերէն Ֆրանսերէն և Սպաներէն. այլ և անգլիական հին գրականութիւն: Իտալական ամբողջ գրականութիւն, ուր այնպիսի ջանասիրութիւն և յաջողութիւն էր ցուցանում, որ կարողանում էր Իտալերէն և Լատիներէն գրել չափով և արձակ՝ ինչպէս մի Իտալացի կամ Լատինացի. նորա զբաղմանց ծաւալն աւելի ևս ընդարձակուած էր երաժշտութեան, մաթեմատիքական մտկայութեանց, աստուածաբանութեան և ուրիշ շատ հմտութեանց ուսումնասիրութիւններով: Այս անդուլ վաստակներով նա պէտք է նախապարաստուէր շատ նշանաւոր ասպարիզի համար: Իմ ծնողների և բարեկամների դիտաւորութիւնն էր եկեղեցւոյ սպասաւորութեան ընծայել ինձ. «մանկութեան ժամանակից յայտնի էր ինձ նոցա դիտողութիւնն, որ և «հակառակ էլ չէր իմ ցանկութեանց: Սակայն երբ որ ես փոքր ինչ հասակ աւագ և տեսայ թէ որ աստիճանի բռնաւորութեան ոգի է տիրել «եկեղեցուն, — ոյսինքն խղճի այնքան զարհուրելի բռնաբարութիւն, որ «հոգեւորական կոչման նուիրուող իւրաքանչիւր դպրատաւոր էր երդմամբ «և ստորագրութեամբ ճանաչել ինքը զինքը Զատի և սրբոյ, հետեւապէս «աղատաբար յանձն առնել փաղ թէ ուշ ուխտադրութեան վտանգը կամ «թէ ենթարկուել իւր միամիտ հաւատոյ խախտման զարհուրելի տանջանքներին, իհարկէ բացի այն դէպքերից ուր որ ուխտած խոստումը չի հա-

«կասում արդէն ինքնին տկար խղճի ազդումներին,—ես աւելի բարւոք
 «դատեցի անբիծ լուսնին պահպանել, քան ստրկութեամբ և ուխտադր-
 «ութեամբ գնել և սկսել քահանայական սուրբ սպասաւորութիւնը»։ Քա-
 հանայ դառնալուց նա այնպէս հրաժարուեցաւ, ինչպէս իսկզբան յուսով
 յօժարել էր։ Նորա յոյսն ու հրաժարումը բղխում էին մի և նոյն աղ-
 բիւրից — ազնւութեամբ գործելու հաստատուն կամքից։ Աշխարհական
 կեանքը վերադառնալով՝ նա դարձեալ շարունակեց իւր առաջուայ դբաղ-
 մունքներն ու կատարելագործութիւնն, ուսանում էր ամենամեծ եռանդով
 և կանոնաւոր ուղղութեամբ, առանց նեղխիտ իմաստակութեան և խաւա-
 րամիտ խտտութեան, ընդհակառակն, իւր վարժապետ Սպենսերի օրինակին
 հետեւելով, նա կարողացաւ դիցաբանութեան, բնութեան նկարագրների և
 մտացածին ստեղծաբանութիւնների գանձերին՝ պայծառ գոյներ և երանգ-
 ներ վճարել իւր Allegro Penseroso և Comus գրուածքների միջնորդութեամբ։
 Այդ ժամանակ ճանապարհորդեց գիտութեան և գեղեցկութեանց երկրում՝
 այցելեց Իտալիան, բարեկամութիւն հաստատեց Գրոցիուսի, Գալիլէի հետ,
 յաճախում էր գիտնականների, մատենագիրների և աւագ մարդկանց ա-
 կումբները, լսում էր երաժիշտներին, առնում էր բոլոր գեղեցկութեանց
 ճաշակը, ինչ որ վերածնութիւնը այնքան ահագին քանակութեամբ հաւա-
 քել էր Ֆլորենցիայում և Հռոմում։ Նորա մեծամեծ հմտութիւնները,
 Իտալական և Լատինական յստակ պերճաբանութիւնը գրաւեցին հումա-
 նիստների բարեկամութիւնն ու հաճութիւնը, այնպէս որ Ֆլորենցիայում
 «այնքան մտերմութիւն և դիւրութիւն վայելեց, որքան իւր հայրենիքում
 կարող էր ունենալ»։ Նա գրքերի և երաժշտական խաղերի պաշար էր հա-
 ւաքում Անգլիա առաքելու համար, և մտադիր էր Սիցիլիայում և Յունաս-
 տանումն ևս շրջագայել, որոնք հայրենիք են նախնի գրականութեան և
 արուեստների, Հելլենոսական երկու մեծ քաղաքակրթութեամբ ներշնչուած՝
 և հարաւային արեգակի ներքոյ ծլած բոլոր ծաղիկներից՝ նա քաղում էր
 լիք բռներով միմիայն ամենահոտաւէտները և ամենաչքնաղները, բայց
 երբէք չապականուելով նրանց շրջապատող ցեխից, «Ակայ է Աստուած,
 «գրում էր նա վերջերը, թէ այս բոլոր վայրերում՝ ուր զեղխութիւն է
 «տիրապետում ես մնացել եմ մաքուր և ազատ ամենայն արատներից և
 «պղծութիւններից, սրտիս մէջ զգաստ պահելով այն խորհուրդը, թէ մինչև
 «իսկ եթէ կարողանամ մարդկային աչքերից ծածուկ մնալ, Աստուծոյ տե-
 «ւութիւնից ոչ մի տեղ թաքուն չեմ մնայ»։ Հեշտախտական և շաղակրատ
 սիրանուագների աշխարհում, ուր կնասերներն և ծեփաւորները փայլում էին
 այդ տեսակ նորաստեղծութիւններով, նա սրբութեամբ և բարձր էր պա-
 հում բանաստեղծութեան վեհ գաղափարը, նա մտադրում էր մի դիւ-
 ցաղնական նիւթ ընտրել Անգլիայի հին պատմութիւնից և միշտ աւելի հա-
 մոզում էր թէ ուր որ ուզում է ընտիր մատենագիր դառնալ և անյուսու-
 «թեան տաքնապի մէջ չը մնալ՝ նա ինքը պէտք է ճշմարիտ անօթ լինի
 «ստեղծաբանութեան ոգւոյ, այսինքն՝ օրինակ և համադրամարումն լաւա-

« գոյն և արժանաւորագոյն յատկութեանց՝ զուր է երազել՝ իբր թէ հա-
 « րաւոր բան է ներքող երգել դիւցադուններին և փառաւոր քաղաքներին,
 « մինչև որ ինքը մարդն իւր մէջ ամփոփած չունենայ այն բոլոր բարեմաս-
 « նութեանց փորձն ու գործադրութիւնն, ինչ որ գովեստի արժանի է: »
 Ամանից աւելի պաշտում էր նա Դանաէին և Պետարկային իրանց բարոյա-
 կան մաքրութեան համար, և ասում էր, թէ, « եթէ ս. Պաւլոսի ասելով
 « կինն է փոքր աստիճան և կնոջ լրբութիւնը միշտ գայթակղութիւն և ան-
 « պատուութիւն է: »¹ ապաքէն այր մարդն աւելի պիղծ և անարգ պէտք է
 « համարուի նոյն արատի համար, որովհետեւ նա պոպիւր և փոքր է Աս-
 « տուծոյ, մինչդեռ այս հանգամանքների մասին հասարակաց կարծիքը հա-
 « կառակն է դաւանում: »² Նա պնդում էր, թէ ամենայն ազնիւ և ազատ
 « հոգի՝ իւր ծննդեան օրից և առանց երգման իսկ՝ պէտք է ասպետ հան-
 « դիսանայ կուսութիւնը պաշտպանելու և ամենքին սիրելի անելու համար, »
 և նա ինքը գործով հաստատեց իւր խօսքն, որովհետեւ մինչև իւր ամուս-
 նանայը չէ գիտացել խառնութիւն: Ամենահրապուրիչ և գայթակղական
 փորձութիւնների դէմ՝ միշտ հաւասար զօրութեամբ մարտնչել է և անա-
 յատ է մնացել, Խոր երկիւղած զգացումներով խիստ վսեմ համարելով
 դաւանութեան խնդիրները՝ նա միշտ խուսափել է կրօնական վէճերից: Բայց
 եթէ նորա կրօնական համոզմանց վերայ յարձակուէին, նա պաշտպանում
 էր նոցա իւր բոլոր զօրութիւններով՝ մինչև անգամ՝ նոյն իսկ Հռովման՝³
 յիսուսականների դէմ՝ երես առ երես՝ չը վախենալով նոցա արուեստով
 իրա տակը փորած ականներից՝ և միայն երկու քայլ հեռաւորութեամբ դժո-
 խական հաւատաքննութիւնից և Վատիկանից, Երբ որ պարտականութեան
 հետ մի վտանգ էր կցորդւում, այդ հանգամանքն ոչ թէ սառնեցնում էր
 նորան, այլ աւելի ևս գրգռում և զրաւում էր, Երբ որ յեղափոխու-
 թեան որոտման առաջին պայթուիւնները լսելի եղան Անգլիայի ճակատա-
 գրին, նա ամենայն պարտաճանաչութեամբ փութաց հայրենիք դառնալու՝
 որպէս մի զինուոր, որ փողահարութեան կոչի հրաւերով շտապում է մար-
 դական շարքի մէջ կանգնել, « քաջ զգալով, ասում նա, թէ իրան ամօթ
 « է, որ օտար երկրում իւր անձը մատնէ զուարճութիւններին և պարապու-
 « թեան այն ժամանակ՝ երբ որ նորա հայրենակիցներն աղատութեան համար
 « են կուում: »⁴ Հէնց որ սկսուեցաւ թունդ կոխը, նա եկաւ որպէս կամա-
 ւոր զինուոր կանգնեցաւ առաջին շարքերում, հոգ չանելով, թէ այստեղ
 երթարկում է ամենածանր հարուածներին, Նորա կրթութեան ուղղու-
 թեան մէջ, նորա վարած պատանեկութեան մէջ, հոգեւոր և արտաքին
 գրուած, ց ընթերցանութեան մէջ, առ հասարակ նորա բոլոր գործոց
 և համոզմանց մէջ՝ միշտ այն իշխող խնամքն է նկատւում— թէ այդ մարդը
 հաստատապէս վճռել է իւր մէջ զարգացնել և արմատացնել գաղափարական
 մարդու բնաւորութիւն:

Մարդիկ կառավարւում են երկու գլխաւոր զօրութիւններով՝ րոպէական

մղմամբ և հաստատուն գաղափարով: Մինը առաջնորդ է զգայուն յափըշտակուող, բանաստեղծ մտքերի տէր մարդկանց, որոնք արագ արագ փոփոխութեանց ընդունակ են: Միւսը՝ գործօն, դիմացկուն, դիւցազնական ոգիների, որոնք իրանց վճիռների մէջ անփոփոխ են, ինչպէս զոր օր: Միլտոնը, Աւսթինները համակրելի են, որովհետեւ սրտի զեղումներով առատ են, երկրորդները ամփոփուած են և աւելի ծածկամիտ մնալու հակամետ են: Առաջինները անձնատուր են լինում լիովին, երկրորդները գործում են զգուշութեամբ: Առաջիններն ընկերականութեան և վստահութեան ոգով, գեղատէր բնազդման ուժով և ամենայն ինչ արագապէս փոխարինելու ընդունակութեամբ՝ ակամայ ցոլացնում են իրանց մէջ շրջապատող մարդկանց և իրերի եղանակն ու արամադրութիւնն, հետեապէս նոցա մէջ ներքին լարումը իսկոյնեւթ համակում և հաւասարակշռում է արտաքին հանգամանաց հետ: Երկրորդները անվստահութեան և խոժոռութեան ազդեցութեամբ, բնազդական ընդդիմակութեան զօրութեամբ և ամենայն դէպքերում միայն իրանց դաւանած կանոնին արագ յարմարուելու ընդունակութեամբ՝ խոր մտնում են իրանց էութեան ներսն, և այդպիսի պատուարների մէջ փակուած՝ անմատչելի են դառնում շրջապատող մարդկանց կողմից ծագող ոչ մի խնդրին, ոչ մի ընդդիմութեան: Սոքա ստեղծում են մի գերակայ (իդէալ): Եւ որպէս նշանաբան կամ դրօշակ՝ այդ գերակայ գաղափարը իւր զինուորին պինդ պահում է իւր տեղում կամ մղում է առաջ: Ինչպէս ամենայն զօրութիւն, որ վաղ թէ ուշ ազդեցութիւն պիտի գործէ, գերակայ գաղափարը գնալով աճում է և ճարակելով կլանում է էութեան մնացած մասը: Մարդս իւր այդպիսի գաղափարը ամրացնում է նոր նոր դիտողութիւններով, փայփայած պահպանում է դատողութիւններով, դորա հետ կապում և շղթայում է իւր բոլոր իմացումների և փորձերի բազմահիւս ցանցը: այնպէս որ եթէ մի փորձութեան վտանգ սպառնայ և սկսէ տանջել այնպէս զինուած հոգուն՝ շատ յաջողութիւն չի գտնիլ, վասն զի այնտեղ միմիայն մի առանձնացած կամ զատուցած սկզբունք չէ թագուցած, որի վերայ յարձակումը դիւրին լինէր, այլ այն տեղ մարդու դաւաճութեանց ամբողջացած և զուգակցած մի կատարեալ դրութիւն է ամբարձած, որ անթիւ ճիւղաւորութիւններ է արձակել և այնպէս ամրացել է, որ ոչ մի երեւելի հրապարակ չը պիտի կարողանայ խախտել նորան իրա տեղից: Այդպիսի մարդու սովորութիւն է դառնում, միշտ պաշտպանողական դիրք բռնել: Նորան յատուկ է պատերազմական դէմք, նա անսասան հպարտութեամբ և արիութեամբ կանգնում է իւր տեղը՝ ի մանկութենէ կազմած համոզման վահանով:

Ժան-Պոլ Բիլետէրի ասածին պէս՝ այդպիսի առհասարակներով օժտած հոգին՝ նման է զանգակի մէջ գտնուած ջրասուղակին: Նա կեանքի մէջ այնպէս է անցուղարձ անում, ինչպէս սա՝ ծովի մէջ, — մաքուր՝ բայց միայնակ, — Անգլիա վերադառնալուն պէս՝ Միլտոնը կրկին խորասուզուեցաւ իւր գրքերի մէջ, և մի քանի աշակերտներ հաւաքելով սկսեց նոցա ուսու-

ցանել իւր կրթութեան օրինակի տարազով, պայինքն նոցա պատուիրեց անպակաս աշխատութիւն, լրջադբաղ ընթերցանութիւն, ժուժկալ կեանք, խիստ վարք՝ ճգնաւորական՝ գրեթէ վանական կեանք։ Բայց յանկարծ ամուսնացաւ (1643 թ. երեսունուհինգ տարեկան հասակում)։ Մի քանի շաբաթից յետոյ կինը թողեց նորան, դարձաւ հօր տունն, ոչինչ չէր ուզում լսել ամուսնու մասին, չէր կարգում նորա նամակներն և անարգանօք վռնտեց նորա ուղարկած մարդուն։ Պարզ է, որ պոստեղ ընդհարուել էին երկու հակադիր բնաւորութիւններ։ Խստաբարոյ և փակ բնոյթը խորշիլի է ամենուն, բայց աւելի ևս անտանելի է կանանց։ Սղքա յայտնապէս տեսնում են, որ այնպիսի մէկի վերայ շատ դժուարին է ազդեցութիւն բանեցնել։ Կաշկանդուում երկնչում են նորա պատկառելի արժանաւորութիւններին, խրտնում և գարշում են նորա հպարտութիւնից. նորա սեպհական հոգացողութեանց և զգացմանց մէջ իրանք ստուերի տակն են մնում։ Կանայք զգում են, որ իրանց առ ոչինչ են դնում, թէ իրանց անխնայ զոհում են յանուն ընդհանրական շահուց և իմաստասիրական աշխատութեանց, թէ իրանց խիստ են դատում ամենայն մանրնակրկիտ բաների մէջ, կամ եթէ հազիւ շնորհ են անում երբեմն զիջանել՝ այն ժամանակ ևս այնպիսի վիրաւորիչ հայեացքով են նայում, ինչպէս որ ողորմութիւն կարելի է շնորհել միայն ստորին և անբան էակներին։ Կանանց համար տաքակոյս չկայ, որ այդ մարդիկ մեծուում են թէ՛ հաւասարութեան իրաւունքը՝ սակայն իրանց անձի համար միայն այդ պահանջելով, և թէ՛ սէրն՝ որ գէթ վարձատրութիւն կարող էր լինել կորուսած հաւասարութեան փոխարէն։ Սեփական բնաւորութիւնը ստեղծուած է անհաղորդ առանձնական կենաց համար։ Նորան պակասում է երկայնամտութիւն, զիջողականութիւն, շնորհալիութիւն, ուրախութիւն և քնքշութիւն, որ ամենայն ընկերութեան համար էական պայմաններ են։ Երաւ է այսպիսի բնաւորութեան վերայ ամենայն դժգոհում և ապշում է, բայց դորանով էլ կը վերջանայ զարմացողի հարկը, մանաւանդ եթէ ինքը սահմանափակ և գոհհաճութիւն անձնաւորութիւն է, ինչպէս որ էր արդարեւ Միլտոնի կինը, և եթէ մտաւոր աղքատութեան հետ միանում է սրտի անընտելութիւնը, «Միլտոնի բնութեան մէջ, ասում են նորա կենսագիրները, նշմարւում էր մի տեսակ խստաբարոյութիւն . . . մտքի այն տեսակ դաժանութիւն, որ աննշան հանգամանքներում զիջանել չը գիտէ», որով նա միշտ այն բարձրութեան վերայ էր մնում և այն ողորտներում, ուր ընտանեկան հոգսերը տեղի չունին։ Նորան մեղադրում էին անըմբեր և զայրացկոտ բնաւորութեան համար, բայց աւելի ստոյգն այն է, որ նա ճգնում էր անաղարտ պահել իւր արժանաւորութիւնը՝ որպէս մարդ, և իւր հեղինակութիւնը՝ որպէս ամուսին, մինչդեռ նա չէր գտնում ո՛չ յարգ ու պատիւ և ո՛չ մարդասիրական գորով, որոնց իւր կարծիքով արժանի էր ինքը։ Բայց անկասկած՝ նա ամբողջ օրը զրբերի հետ էր ընկերացած, իսկ մնացած ժամանակ սրտի մտօք ապրում էր բարձրագոյն, վերացական աշխարհում, ուր կանանցից սակաւները մուտք են

գտնում, իսկ նորա ամուսինը աւելի պակաս քան թէ որեւիցէ ուրիշը: Արդէն ամուսին ընտրելիս ապացուցեց Միլտոնը, թէ որքան անփորձ է աշխարհքից և որքան միայն առանձնասեռնեկում ապրող մի մարդ է: Կնոջ փախուստն էլ տարաւ նա որպէս կատարեալ առանձնասեռնեկի մարդ, և այնքան աւելի էր կատաղեցնում նորան այդ դէպքն, որքան աւելի քիչ էին ծանօթ նորան աշխարհքն ու ընկերական կեանքը: Բնաւ չը կարծելով, թէ ծիծաղելի պէտք է հրեւի, և որպէս առաջին անգամ իրականութեան հետ ընդհարուած մի մարդ, նա գրեց ապահարզանի մասին քննախօսութիւններ փիլիսոփայի խստաբարձաւ ոճով, ստորագրեց նոցա տակը իւր անունն, ընծայեց նոյնը բարձրագոյն Խորհրդարանին, և այնուհետեւ իրան համարում էր ամուսնական կապից լուծուած՝ *de facto* (իրողաբար) այն պատճառով, որ նորա կինը հրաժարուում էր դառնալ, և *de jure* (իրաւաբար) այն պատճառով, որ իւր այդ վարմունքը արդարացնում են Ս. Գրոց չորս վկայութիւնները: Հետեւաբար նա սկսեց մի նորահասակ օրիորդի փաղաքշել, բայց անսպասելի կերպով իւր ոտքերի առաջ տեսնելով զըջացած և արտասուալի ամուսնուն՝ ներեց նորան. սկսաւ դարձեալ կենակցել նորան, բայց և վերստին սկսեց վարել ցամաք ու տխուր ընտանեկան կեանքը: Փորձը բնաւ նորան չը խրատեց, այնպէս որ նա վերջերը խիստ անզգոյշ գտնուեցաւ և դարձեալ երկու անգամ ևս ամուսնական կապեր հաստատեց, — վերջին անգամ մի կնոջ հետ, որ իրանից երեսուն տարով դեռահասակ էր: Նորա ընտանեկան կեանքի միւս մասերն էլ այն չափով դժբախտ և դառն էին: Իրան քարտուղար կարգեց իւր դուստրներին, որոնք պարտաւոր էին նորա առաջ բարձրաձայն կորդալ իրանց անհասկանալի լեզուներով, որ հարկաւ հրապուրիչ աշխատութիւն չէր և տեղիք էր տալիս շատ իրաւացի գանգատների: Ինքն էլ իւր կողմից մեղադրում էր նոցա, թէ «նոքա որդիական պատկառանք չունին առ հայրն, անփոյթ և անխնամ են, մենակ են թողնում նորան, աղախնու հետ խօսքը մէկ են արել և գողանում ու խարդախում են ծախսարարութեան մէջ, յափշտակում են մինչև իսկ գրքերն, և այն աստիճանի արատաւորուել են, որ գուցէ չամաչեն և մնացած ձորձերն էլ տանեն վաճառեն վաշխառու փերեզակին»: Նորա երկրորդ դուստր՝ Մէրին՝ լսելով թէ հայրը պատրաստուում է մի անգամ էլ ամուսնանալ, այս խօսքերն արտասանեց. «Բնաւ նորութիւն չէ, որ Վրաց պսակուում է. նորութիւն կը լինի, եթէ դա իւր ոտքերը ձգէ»: Սոսկալի բառեր, որոնք տարօրինակ լոյս են սփռում այս թշուառ ընտանեկան կեանքի վերայ: Ոչ հանգամանքներն և ոչ բնաւորութիւնը Միլտոնին չը պատրաստեցին երջանկութեան համար:

Ս. Մանգլինեանց.

(Կըշարունակութիւն):